ԱՋԴ

Խարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կտակին տրամադրութեան համաձայն՝ Սահակ - Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ:

Հետևապէս՝ այն ամեն հեղինակք ու բանասէրք որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ ո՛և է երկասիրութեամբք կը փափաքին մասնակցիլ սոյն մրցանակաբաշխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ տարւոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ամեն. Սրբազան Պատրիարքն Հայրն ի Կ. Պոլիս իրենց աշխատասիրութիւններն:

Տպագրեալ երկասիրութիւնք երեք օրինակ պէտք է յուղարկուին, իսկ ձեռագիրք մի օրինակ որք չեն տրուիր:

29 Յունիս 1892.

Վարչութիւն Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռոյ Ծանուցանէ ի գիտութիւն ամենեցուն զյետագայս.

1. Ի Դպրոցական դասարանս ճեմարանիս ընկալեալ լինին թէ ուսեալքն ի թեմական և ծխական եկեղեցական դպրոցս և թէ պատրաստեալքն առանին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան աւարտեալք զընթացս ուսման թեմական Դպրոցաց:

2. Ցայսմ ամի ի դպրոցական դասարանս չկարեն ընկալեալ լինել աշակերտք յայնց տեղեաց, յորոց արդէն բաղումք են ի ճեմարանիս. — յԱլէքսանդրապոլէ, յԱխալցխայ, ի Դաւրիժոյ (քաղաքէն), ի Կարուց, ի Վաղարշապատայ, ի Ղզլարէ (ի քաղաքէն), ի Շուշւոյ) (ի քաղաքէն), ի Թիֆլիսէ (ի քաղաքէն), յՕշականայ, ի Մեծ Սալայ և ի Թոփտի գեղից, Նոր - Նախիջևանի և ի Մեղրի գեղջէ: Իսկ աւարտեալքն զլիուլի դասընթացս թեմական դպրոցաց ընկալեալ լինին յառաջին լսարան:

3. Ցանկացողք ի մտանել յաշակերտութիւն ճեմարանիս մատուցանեն զինդիր յանուն Ամենապատիւ Տէր Տեղակալի ց 25

Օգոստոսի՝ առաջի առնելով ընդ նմին զվկայագիրս ծննդեան՝ պատուաստման ծաղկի և ուսման այնր դասարանի թեմական կամ ծխական եկեղեց. Դպրոցի՝ ուստի խնդրատուն իցէ։

4. յԳ-րդ դասարան մտանեն պատանիք 14—16 ամեայք՝ ըստ այսմ համեմատութեան և ի յաջորդ դասարանս։

5. Աշակերտք ընկալեալ լինին ի դասարանս ըստ հարցաքննութեան։ Վասն մտանելոյ յԳ-րդ դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական ծխական Դպրոցաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս—պատշաճ նոցին ուսումն ըստ ծրագրոյ՝ հաստատելոյ ի պէտս թեմական Դպրոցաց։

6. Յանկացողք մտանելոյ յառաջին լսարան հարցաքննին՝ 1. յընդարձակ եկեղեցական պատմութիւն՝ 2. յընդարձակ Քրիստոնէական վարդապետութեան եկեղեցւոյ Հայոց՝ 3. ի ծանօթութեան Աւետարանացն Ղուկասու՝ Յովհաննու և Գործոց Առաքելոց՝ 4. ի լեզուս Հայոց՝ Ռուսաց և ի Ֆրանսիականին։

7. Ընկալեալքն ի հարցաքննելոց յաշակերտութիւն ձեմարանիս կանխաւ մատուցանեն ի գրաւ զ50 բուբլիս՝ եթէ եկեսեն ի Կովկասեան կողմանց. իսկ ի հեռաւոր և յարտասահման վիճակաց եկեալքն՝ զ75 բուբլիս. որպէս զի հատուցի նոցա այդ գումար ի ծախս վերադարձի ի հայրենիս և և ի գին կորուսեալ և վատնեալ գրոց և այլոց իրեղինաց. ըստ այսմ վարին և աշակերտք ձեմարանիս՝ որք ցարդ չեն մատուցեալ զայդ գումար։

8. Բաց ի ձրիավարժից ընկալեալ լինին ի ճեմարանն նաև թոշակաւորք։ Իւրաքանչիւր թոշակաւոր վճարէ ի տարին երկու հարիւր բուբլիս՝ յերկուս նուագս՝ ի Սեպտեմբեր և Յունվար ամիսս։

9. Թոշակաւոր աշակերտք ձեմարանի՝ որոց չև և ս է հատուցեալ զթոշակ անցելոյ ամի պարտին մատուցանել զայնս ի վերադարձի իւրեանց՝ որպէս և վասն առաջիկայ ուսումն կիսամեկի։

10. Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի ի ձեմարանէ մինչև իցէ բոլորեալ կիսամեկին վճարելոյ՝ թոշակ նորա ոչ դարձուցի յետս։

Տեսուչ ձեմարանի՝ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.